Խրօխպէր էլաւ, դարձաւ տուն։

Դաւիթ լպստրակներ, աղուիներ, կուզեր ժողվեց, առից, իպի, լից մեանչ քեաղքին։

Քեաղքցիք էլան, չոկըցին ուրանց գեառներ, տարան։ Ամէն մէկ ինչքանդար կպէր[1]) լպստրակ, աղուիս, կուզ՝ տարան խիտ. լպստրակ զինիցին խատ ուլիրուն՝ կերան. աղուիս, կուզ էրին քուրք, խագան։ Էն վըիտէն լպստրակն էլ չուր մկայ էլ հա՝ կ'զինին, հա՝ կ'ուտին. աղուիս, կուզ կ'էնին քուրք՝ խագնին։

Ձէնով-Ցեովան էսաց.—Դաւիթ, տիւ էլ ի՞նչ տ'էնիս. էսաց՝ քի մէկ տիրկավուն[2]) կ'առնիմ, էրթաս նէձիր[3]) էնիս*)։

Էսաց.—Խրօխպէր, էդիկ լաւ իմ բան ի։

Դաւիթ առից, կինաց մէձիր. առից, կինաց պառուու կորկի մէջ, առից լիւր սպանել։ Մէկ արտ կուրիկ պառուուն տրուրից։

Պառաւ էլաւ, կինաց, տեսաւ, որ Դաւիթ զկուրիկ տրուրիր ը. շատ ըռըկաւ, յիշունց[4]) իտու.—Դաւիթ, կիրոզս քի տանի, մախս քի տանի, իմ ապրուստ էն մէկ արտ կուրիկն էր, էն էլ վեար ձի կտրիցիր։ Իլի, կինա՝ քիւ խօր նէձրի սար, վէրու օչխար կայ, մարալ[5]) կայ, խաղալ[6]) կայ, սպանը՛, բի՛ քի խամար ապրուստ էրա՛. էդ քի խամար ապրուստ չի, իմ արտ կ'տրուրիս։

Դաւիթ էսաց.—Պառաւ, խուգիւդ արիւուդ կուրբան կ'ըլնիմ, ո՞րտեղն ի, ընձը շանք տու։

Էսաց.—Կինա՝ մատ խրօխպէր Ձէնով-Ցեովան, քի կ'ասը։

Էլաւ լալելէն կինաց մատ խրօխպէր.—Խրօխպէր, իմ խօր նէձրի սար ընձը շանք տը տաս**)։

---

[1]) Պէտք էր։ [2]) Նետ ու աղեղ։ [3]) Որս։ [4]) Ցիշոց.ք, հայհոյանք։ [5]) Եղջերու։ [6]) Վայրի այծ։

*) Բ. վարիանտով Դաւիթ նախրչութիւնից և գառնարածութիւնից յետոյ կարդալ է սկսում և երբեմն ծածուկ պառաւի արտում որսորդութեամբ պարապում։

**) Դաւիթ այստեղ Ա. վարիանտում երգով դիմում է հօրեղբօրը.